ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հեքիաթի դերը անձի արժեքային համակարգի ձեվավորման եվ զարգացման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Զ. Նազոյան

ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի Հրաչյա Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոց

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակը ՝ ուսումնասիրել հեքիաթի դերը և նշանակությունը անհատի նկարագրա կան,գեղեցիկ խոսքի ձևավորմանը գործընթացում:

Խնդիրները՝

1.Վերհիշել ժողովրդական բանահյուսության տարրերը:

2.Հարստացնել իրենց մտահորիզոնըհեքիաթի մասինգիտելիքներով և ձեռք բերել տեղեկություն հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ:

3.Գործնականում կարողանալ տարբերակել իրապատում և հրաշապատում հեքիաթները:

4.Կառուցել արտահայտիչ և գեղեցիկ խոսք:

Մեթոդները պատմահամեմատական,մտագրոհի,տեսական մեթոդներից՝ վերլուծություն,համադրում,համեմատում,ընդհանրացում, մեթոդներց՝ զրույց հարցման կամ հարցազրույցի մեթոդ:

Հայ ժողովրդական հեքիաթները դեռևս չեն ուսումնասիրվել,եղած մի քանի հոդվածներն ու առաջաբանները դեռևս հեռու են գիտական հետազոտություններ համարվելուց:Բարեբախտաբար,համեմատաբար բարվոք վիճակում է հեքիաթների գրառման և հրատարակության գործը:Ճիշտ է,այդաշխատանքն ըստ էության սկսվում է XIX դ-ի երկրորդ կեսից,բայց սխալ կլինի կարծել,թե մինչ այդ ոչինչ չի արվել:Բանասերներն արդեն ցույց են տվել (Բ.Խալաթյան և ուրիշներ),որ քրմերը հեթանոսության շրջանում երկրի տնտեսական,քաղաքական ու կրոնական կյանքի պատմությունը գրել են հեքիաթների,բանահյուսական այլ նյութերի հիման վրա:Նույնն են արել և մեր պատմիչները միջնադարում:Կարելի է ասել,որ չէին շարադրվի

Ագաթանգեղոսի,Մովսես Խորենացու,Փավստոս Բուզանդի և Հովհան Մամիկոնյանի <<Պատմությունները>>,եթե չլիներ բանահյուսությունը:Նրանք եղել են միջնադարյան առաջին բանահավաքները,որոնք բանահյուսական այլ նյութերի հետ միասինհավաքել են նաև հեքիաթներ և յուրովի են վերապատմել իրենց գործում՝ <<առասպելական զրույց>>,<<հին զրույց>> կամ ուղղակի <<զրույց անվան տակ>>:Հեքիաթների բազմաթիվ վերապատումեր գտնվում են միջնադարյան մեր մյուս պատմիչների գործում:Այսպիսով հեքիաթները,թեև անկազմակերպ ձևով,տարերայնորեն,բայց հավաքվել ու օգտագործվել են ողջ միջնադարի ընթացքում:Պատմիչների գործերից նրանց առանձնացնելն ու հրատարակելը գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատանք է:Նրանք հստակ պատկերացում կտան հեքիաթի յուրօրինակ կյանքի մասին միջնադարում և մեծապես կհարստացնեն հեքիաթների մեր ունեցած ֆոնդը:

19-րդ դարի երկրորդ կեսին՝ հայկական կյանքի զարթոնքի և ազատագրական շարժումների ազդեցությամբ,հեքիաթների հավաքմանը,ի տարբերություն նախորդ շրջանների,զուգակցվում է նրանց հրակարակությանը,որը գնալով ավելի ու ավելի լայն ծավալ է ստանում:

Հայ ժողովրդական մի քանի հեքիաթներ առաջին անգամ հրատարակվել են հայտնի բանահավաք ու ֆոլկլորագետ Գարեգին Սրվանձտյանի <<Մանանա>> գրքում 1876թին: Շուտով դրան հաջորդում է նույն հեղինակի <<Համով-հոտով>> բանահյուսական ժողովածուն,որտեղ նույնպես տեղ են գտնում արևմտահայերեն հեքիաթները:

Հեքիաթների առանձին ժողովածու է լույս տեսնում 1872թ-ին <<Հայ ժողովրդական հեքիաթներ>> խորագրով:Դա Տիգրան Նավասարդյանցի հավաքած հեքիաթների առաջին խումբն է:Հետագայում նույն խորագրով լույս է տեսնում ևս 8 խումբ՝ Արևելյան Հայաստանի տարբեր վայրերից հավաքած շուրջ 80 հեքիաթներով:Չորս տարի հետո՝ 1886թ-ին լույս է տեսնում Գ.Տեր-Ալեքսանդրյանցի <<Թիֆլիսեցոց մտավոր կյանքը>> բանահյուսական հարուստ ժողովածուն՝ 45 հեքիաթով,իսկ 1887 և 1899 թթ-ին՝ Շերենցի <<Վանա Սազ>>-ի առաջին և երկրորդ մասերը,որոնք պարունակում են Վասպուրականի հեքիաթները:Բազմաթիվ հեքիաթներ են հրապարակվում միայն <<Էմինյան ազգագրական ժողովածում>>:

Հեքիաթի գրառում ու հրատարակությունը առաջին գրքերով և տարբեր հանդեսներում ու պարբերականներում շարունակվում է ըդհուպ մինչև մեր օրերը:

Գրականության ակնարկ՝

Հեքիաթը հայ ժողովրդական բանահյուսության ամենահին,ամենատարածված և ամենահարուստ ժանրերիցմեկն է:Բանահյուսական ինչպես մյուս բոլոր ժանրերի,այնպես էլ հեքիաթի ստեղծող ու պահպանողը միայն ժողովուրդն է:Այն բանավոր,էպիկական,գեղարվեստական արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է,հիմնված ֆանտաստիկ հնարանքի վրա,հնարանք,որի

բազմապիսի տրադիցիոն ձևերը չեն կրկնվում բանահյուսության որևէ այլ ժանրում:Հեքիաթին հատուկ ֆանտաստիկ հնարքները ստեղծվել ու ձևավորվել են դարերի ընթացքում՝ ժողովդական կյանքի բոլոր ձևերի սերտ կապի մեջ:Այն սկզբնապես սերտորոն կապվել է նաև առասպելաբանության դիցաբանության հետ:

Մարտնչելուն բնության և հասարակության չար ուժերի դեմ,դեռևս անհիշելի ժամանակներից աշխատավոր մարդը ձգտել է թեթևացնել իր աշխատանքը,բարձրացնել նրա արդյունավետությունը,ապրել ուրախ ու երջանիկ:Չարիքի,արհավիրքների դեմ մղված տևական գոտեմարտերում,ինչպես նաև ապագա լավագույն կյանքի երազանքներում է ձևավորվում նրա հոգեբանությունը,որը աշխատավորական է և խորապես լավատեսական:Այս տեսակետից նշանակալից են բարու մշտական հաղթանակը,չարի,լույսի հաղթանակը խավարի առաջադիմականի հաղթանակը հետադիմականի ու ընդհանրապես կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ,հաղթանակներ,որոնք բազմապիսի ձևերով ու նրբերանգներով,դրսևորված են հայ ժողովրդական գրեթե բոլոր հեքիաթներում:

Հայ ժողովրդական հեքիաթները աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթների նման իրենց նկարագրով և իրականության արտացոլման եղանակներով միասեռ չեն:Նրանք բաժանվում են հիմնականում երեք տեսակի,որոնցից առաջինը՝ կենդանական,երկրորդը՝ հրաշապատում կամ կախարդական,երրորդը՝ իրապատում,ռեալիստական կամ կենցաղային:

Կենդանական հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից և կապված են նրանց ընտելացման առաջին փորձերի հետ:Ապրելով բնության ծոցում,մարդը շատ հաճախ շփվում էր նաև վայրի կենդանիների հետ և տնտեսական ու այլ նկատառումներով ձգտում հասկանալ նրանց լեզուն,նրանց վարքը ու բարքը,նրանց բնավորությունը:Այդ ձգտումը որոշակի հետքեր է թողել որսորդությամբ զբաղվով ցեղերի ու ժողովուրդների հեքիաթներում:Կենդանական հեքիաթները ժողովրդի մանկության շրջանի ստեղծագործություններն են,որոնց համար բնորոշ ողջ առարկայական և հատկապես բնության երևույթների ու կենդանիների անձնավորում է,մարդկայնացումը:

Հրաշապատում կամ կախարդական հեքիաթները ծագումով ու կազմավորմամբ համեմատաբար հին են,նրանք բաժանվում են չորս խմբի՝ հերոսական,ընտանեական,սոցիալ դասակարգային,արխայիկ:

ա)Հերոսական հեքիաթները թեմատիկ ու սյուժետայինբազմազանությունը:նրանցում մարդկային հարաբերությունների,կյանքի և ընդհանրապես ողջ առարկայականի ընդգրկումն այնքան լայն է ու բազմակողմանի,որ դժվար է արհեստական սահմանների մեջ առնելը:Հերոսական հեքիաթների առավել ակնառու սյուժեներից են՝ թագավորի աղջիկը,կամ անհասանելի

<<հուրի փերուն>> տիրանալու համար թագավորի կրտսեր տղայի,իսկ հաճախ նաև աղքատ գյուղացու թափած ջանքերը,անօրինակ հերոսամարտերը դևերի,վիշապների և բնության չար ուժերի դեմ:

Այսպիսով, հեքիաթների հերոսականության հիմքը թե՛ հային և թե՛ մյուս բոլոր ժողովուրդներին հարազատ բարձր գաղափարներն են,ցանկալին ու իդեալականը:

բ)Մինչև այժմ հրատարակված հայ ժողովրդական հեքիաթների մեջ իրենց քանակով նշանակալից տեղ են գրավում ընտանեական կոնֆլիկտի վրա կառուցված հեքիաթները: Ընտանեական կոնֆլիկտի վրա կառուցված հեքիաթների հերոսները դրանցից բացի օժտված են տառապանքներին՝ դիմադրելու մեծ կամքով համբերությանը ,բարությանը և լավատեսությանը:Տղամարդիկ գործունյա են ու խելացի,իսկ կանայք նաև գեղեցիկ:

գ) Սոցիալ- դասակարգային կոնֆլիկտի վրա կառուցված հեքիաթները կազմում են հրաշապատում հեքիաթների առյուծի բաժինը,նրանք ևս աչքի են ընկնում սյուժեների հարարությամբ ու բազմազանությամբ:Հիշատակության արժանի են հետևյալները՝ աղքատ գյուղացու տղանհարուստի կողմից վարձվում է աշխատանքի նրա աղջկա հետ պսակվելու պայմանով:Հարուստը համաձայնվում է,բայց հետո դրժում է իր խոսքը և փորձում աղջկան պսակել ուրիշի հետ:Գյուղացի տղան հրաշքային ուժերի օգնությամբ ստիպում է հարուստին կատարելու պայմանը:Այսպիսով նա ամուսնանում է աղջկա հետ և տիրանում աղայի հարստությանը:

Իրականում,իհարկե,ոչ մի աղքատ,ոչ մի ավելի կամ հողագործ չի պսակվել թագավորի աղջկա հետ կամ գերբնական ուժերի օգնությամբ հաղթել նրան ու դարձել թագավոր:

դ) Արխայիկ հեքիաթները տարբերվում են առաջին երեք խմբի հեքիաթներից ոչ միայն իրենց բովանդակությամբ ու կոնֆլիկտների բնույթով,այլև կերպարներով:Նրանց հերոսները գրեթե միայնակ են կռվում հակառակորդի դեմ և այն էլ ոչ թե զենքով,ֆանտասիկ ուժերի ու առարկաների օգնությամբ,այլև հակառակորդից սովորած հնարներով՝ վերափոխումներով;Արխայիկ հեքիաթների դրական հերոսներ միակ ու գլխավոր զենքը խոսքն է,իմացությունը:

Իբրև գլխավոր հատկանիշ պետք է նշենք չորս տարբերակներում ամեն ինչ,սկսած մարդ հերոսներից,վերջացած նրան օգնող կենդանիններով,առարկաներով,բնության երևույթներով,մարդուն թշնամի գազաններով:

Իրապատում,կենցաղային կամ ռեալիստական հեքիաթները հասարակական կյանքը,մարդկային,դասային ու դասակարգայինփոխհարաբերություններն արտացոլում են առավել իրական,առավել

ռեալիստական գույներով:Ռեալիստական հեքիաթների հիմնական թեմաներն են հերոսի ամուսնությունը,ամուսնական հավատարմությունն ու անհավատարմությունն,ծույլ և անաշխատ կանանց ու աղջիկների վարքագծի երգիծումը,անհնազանդ կանանց հնազանդեցումը,ծույլ և անաշխատ տղամարդկանց իրոնիկ կերպարի պատկերումը,խելքի և իմաստության գովասանքը,աշխատանքի և արհեստի գովքը,բախտն ու ճակատագիրը,արդարությունն ու անարդարությունը,ճնշողի և ճնշվողի փոխհարաբերությունը,շահագործողների և շահագործական կարգերի դերը ըմբոստացումն ու պայքարը,կրոնավորի և մինչև իսկ կրոնի խիստ քննադատությունն ու հերգումը և այլն:

Գործնական համատեքստ

Հետազոտությունը կազմակերպել եմ ժողովրդական և հեղինակային հեքիաթների ուսումնասիրման ընթացքում ձևավորելով գրականագիտական հասկացությունների ընկալման և հեքիաթի կառուցվածքային տարրերի,բովանդակության և ժանրի համեմատական կարողությունները:Հետազոտության ընթացքում պետք է ուսուցանել,վերլուծել,առանձնացնել գլխավորը,համեմատել փաստերը և իրադարձությունները,ընդհանրացնել և համակարգել գիտելիքները,ապացուցել դատողությունների հավաստիությունը,կամ ժխտել դրանք,բացատրել գրականագիտական հասկացությունները:

Հեքիաթներ թեման այնքան հետաքրքիր է,որ կխանդավառի երեխային:Հետազոտական գործունեությունը արդյունավետ կարող է լինել նշմիայն կազմավորության սկզբունքի պահպանմամբ:Հետազոտությունը ավելի լավ է իրականում,երբ առարկան գրավիչ է և զարմացնող:Հետաքրքրող թեման ընտրելու համար հարկավոր է ճշգրտել նրա հակումները:

Խնդիրը պետք է լինի կատարելի,իսկ դրա լուծումը հետազոտության մասնագետների իրական օգուտ կբերի:Այս թեման ներառում է անսպասելիության և անսովորության տարրեր:Երեխաների իմացությունը զարմանքից է սկսվում,իսկ մարդը զարմանում է անսովոր բաներից:Այս դեպքում ինքնատիպությունն ընկալվում է ոչ միայն որպես ինչ-որ անսովոր բան գտնելու,այլև սովորական իրերին ու երևույթներին ստանդարտ մոտեցում ցուցաբերելու ունակություն:Այս թեման թելադրում է նաև աշխատանքը հնարավորինս արագ կատարելու պահանջ:Բանն այն է,որ կրտսեր դպրոցականի ինչոր խնդրի վրա տևականորեն ուշադրությանը կենտրոնացնելու,նույն հարցի շուրջ երկար մտորելու հնարավորությունը սահմանափակ է:Հաճախ պատահում է,որ ոգևորությամբ սկսվում է մի անգամից ավարտին չհասցված աշխատանքն այդպես էլ անավարտ է մնում:Այս թեման,որ ընտրել եմ հաշվի եմ առել՛,հետևյալ հանգամանքները:

Խնդիրը համապատասխանեցրել եմ երեխայի տարիքայինին:Այս դիրքորոշումը սովորաբար ոչ այնքան խնդրի ընտրությանն է վերաբերվում,որքան դրա

ներկայացման մակարդակին:Նույն խնդիրը տարբեր տարիքի երեխաների կողմից է և ուսումնասիրության տարբեր փուլերում տարբեր կերպ և խորության տարբեր աստիճաններով կարող է լուծվել:Խնդիրը ընտրելիս հաշվի եմ առել՝ կա՞ն արդյոք դրա համար անհրաժեշտ միջոցներն ու նյութերը:Գրականություն,որից անհրաժեշտ տվյալներ կհավաքեն,որովհետև անհնարինությունը սովորաբար մակերեսայի լուծման կհանգեցնի:

Ենթադրությունների և անսովոր գաղափարների առաջադրումը ձևավորվում է մտածական կարևոր հմտություններ,որոնք ցանկացած ոլորտում կապահովվեն առաջընթաց:Կիրառվող մեթոդներն ու միջոցները կօգնեն իրագործել նպատակը:Սրանք խնդրի լուծման հնարավոր տարբերակներն են,որը կստուգվի հետազոտության միջոցով:Այս աշխատանքը հիմնավոր գործ է,այն չի հանդուրժում շտապողականություն ու իրարանցում:Երեխանները պետք է խորանան խնդրի մեջ՝ նրանց հետաքրքիր և անսովոր գաղափարներ առաջադրելու,դրանք մշակելու կարողություն ձևավորելու միջոցով:Պետք է օգնել երեխաներին՝ գտնելու նպատակին հասնելու բոլոր ճանապարհները,առանձնացնելու համընդհանուր ընդունելի,հանրաճանաչ և ոչ ստանդարտ եղանակներ,հստակ որոկավորել դրանք,այնուհետև գնահատելով յուրաքանչյուր եղանակի արդյունավետությանը՝ ընտրություն կատարել:

Սեփական հետազոտությունն անցկացնելու պահանջմունքն է նոր տեղեկատվության աղբյուրների որոնում:Երեխային պետք ոգևորենք տարբեր աղբյուրների հետ աշխատանքով:Դպրոցում կարելի է առանձնացնել անկյուն,որը կարող է ծառայել որպես գրադարան,որտեղ կկուտակվեն հետազոտական աշխատանքին անհրաժեշտ նյութեր:Կարող են լինել գրքեր,մանկական տեղեկատվական գրականություն և այլն:Սակայն պետք է նկատի ունենալ,որ գրքով,տեսաֆիլմով,տեղեկատվության աղբյուրներով ձեռքբերվող տեղեկություններըմատուցվում են ինչ-որ մեկի կողմից:Շատ կարևոր է գիտելիքները ձեռք բերել ինքնուրույն:Տեղեկատվության առավել արժեքավոր աղբյուր կարող է հանդիսանալ բնությունը իր ամենատարբեր դրսևորումներով:Աշակերտները պետք է հավաքեն նյութեր,որ հեշտ է,իսկ ստացված տվյալների ընդհանրացումը դժվար զբաղմունք է:Անհրաժեշտ է տվյալներ վերլուծել,նյութն ընդհանրացնել,առանձնացնել գլխավորը երկրորդականից:

Հետազոտության ընթացքը

Դասի պլան 1

Դասարան 3-րդ

Թեմա՝ <<Լինում է,չի լինում՝ մի հեքիաթ է լինում>>.մուտքի զրույց

Դասի նպատակները

Աշակերտները՝

1. Կվերհիշեն ժողովրդական բանահյուսության տարրերը,
2. Կհարստացնեն իրենց մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով
3. Ձեռք կբերեն տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ,
4. Կկարողանան գործնականում տարբերակել իրապատում և հրաշապատում հեքիաթները
5. Կկառուցեն նկարագրական գեղեցիկ խոսք:

Վերջնարդյունք- Աշակերտները կիարողանում էին ներկայացնել հեքիաթի դեպքերի և դրանց հաջորդականությունը,տեքստի գաղափարը,հեքիաթի հերոսներին,նրանց արարքների համեմատում ,հակադրում և գնահատում,բայց թերանում էին հեքիաթագիրների մասին տեղեկություններով :

Գնահատականը- Միավորային գնահատական ստացան բոլորը:

Մեթոդներ՝ էմպիրիկ մեթոդներ՝ հարցման կամ հարցազրույցի մեթոդը,տեսական մեթոդներից՝ վերլուծություն համադրման,համեմատման,ընդհանրացման:

Ռեսուրսները- թղթեր գունավոր և ճերմակ,մատիտներ,հեքիաթի գրքեր և այլն:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Դասն սկսվում է Զ. Սարիբեկյանի «Հեքիաթների գիրքը» երգով: Ձայնակցում են նաև աշակերտները: Նոր ուսումնասիրվող թեման ուսուցիչը չի ազդարարում անմիջաբար: Աշակերտները պետք է խաղի միջոցով կռահեն թաքցված բառը: Այդ բառի տառերը գուշակելու համար նրանք պատասխանում են նախապես պատրաստված հարցերին:

Ուսուցիչ -Հեքիաթի ո՞ր հերոսն է անբան, աշխատել չի սիրում և ամբողջ օրը նստած մաստակ է ծամում:

Աշակերտ- Հուռին:

Ուսուցիչ -Այն ի՞նչն է, որ քնած ժամանակ ենք տեսնում:

Աշակերտ-Երազ:

Ուսուցիչ -Անհաղթ հերոս, ով մին զարկում է, ջարդում է հազար:

Աշակերտ - Քաջ Նազար:

Ուսուցիչ -Վինի Թուխի ընկեր իշուկի անունը:

Աշակերտ- Իա:

Ուսուցիչ -Անդերսենի հեքիաթի հերոսներից, որը մեծանում և դառնում է գեղեցիկ կարապ:

Աշակերտ - Անճոռնի ճուտիկը:

Ուսուցիչ -Սպիտակաձյունիկի յոթ ընկերները:

Աշակերտ -Թզուկներ:

Երեխաները պատասխանների առաջին տառերը տեղադրում են վանդակներում, և ստացվում է հեքիաթ բառը: Երբ աշակերտներն արդեն գիտեն թեմայի անվանումը, ուսուցիչը հանձնարարում է մտագրոհի մեթոդով թվել այն ամենը, ինչ զգում են *հեքիաթ* բառն ասելիս:

Երազ

Ջրահարս

Լինում է, չի լինում

Թագավոր

Բարի

ՀԵՔԻԱԹ

Թագուհի

Հրաշք

Կախարդ

Մուլտֆիլմ

Հերոսներ

Թռչող գորգ

Դղյակ

Առաջարկվում է նաև թվարկել այն հեքիաթները, որոնք նրանք կարդացել են: Աշակերտների ուշադրությունը հրավիրում է հեքիաթների մուտքին:

Ուսուցիչ- Հիշե՛ք, թե ինչ բառերով են սկսվում հեքիաթները:

Աշակերտ - Լինում է, չի լինում, կար-չկար, ժուկով–ժամանակով:

Ուսուցիչ – Ինչ է հեքիաթը:

Աշակերտ – Հեքիաթը մի ստեղծագործություն է, որտեղ բարին հաղթում է չարին:

Ուսուցիչ – Հեքիաթներում իրակա՞ն դեպքեր են նկարագրված, թե՞ հորինված: Նշեք հեքիաթներ, որոնք կարող են լինել իրական:

Աշակերտ – Օրինակ՝ «Անբան Հուռի» հեքիաթը նման է իրականությանը. մեր կյանքում էլ կարող է լինել այդքան ծույլ մարդ, որ աշխատանք չսիրի և խորամանկությամբ կարողանա քողարկել իր ծուլությունը:

Ուսուցիչ - Հիշեք այնպիսի հեքիաթ, որը չի կարող իրականում լինել:

Աշակերտ – «Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները» հեքիաթում Սպիտակաձյունիկը ուտում է թունավոր խնձոր և չի մահանում: Նրան երկարատև քնից արթնացնում է արքայազնը: Թագուհին էլ չի կարող կերպարանափոխվել և դառնալ պառավ կին:

Ահա այսպիսի օրինակներից հետո աշակերտներն ուսուցչի օգնությամբ հանգում են այն եզրակացության, որ հեքիաթները լինում են իրապատում և հրաշապատում: Ուսուցիչն էլ հավելում է երրորդ տեսակը՝ *կենդանական* հեքիաթներ, և օրինակների միջոցով գաղափար է տալիս դրա մասին:

Իմաստի ընկալում

Ուսուցիչ *-Հեքիաթը ժողովրդական բանահյուսության տարրերից է: Այն եկել է դարերի խորքից: Ժողովրդի ծոցից դուրս են եկել բազմաթիվ հեքիաթներ և փոխանցվել սերնդեսերունդ: Դրանք համարվում են ժողովրդական հեքիաթներ: Հեքիաթները համարվում են նաև գրական ստեղծագործություններ, եթե այն գրվել է որևէ գրողի կողմից: /Երեխաները թվում են հեքիաթագիրների անուններ/:*

Հեքիաթներն ամփոփում են ժողովրդի երազանքներն ու ցանկությունը: Այն, ինչ հնարավոր չէ իրական կյանքում, մարդիկ դրանք կատարում են հեքիաթներում: Օրինակ՝ քչերը գիտեն, որ Հանս Քրիստիան Անդերսենի «Անճոռնի բադիկը» հեքիաթի հիմքում ընկած է հենց իր՝ գրողի կենսագրությունը: Հեքիաթագիրը պատմում է, որ երբ փոքր էր, առանձնապես սիրունադեմ երեխա չէր. քիթը երկար էր, իսկ ականջները փոքրիկ թռչնի թևիկների էին նման: Նրան իր ընկերները ծաղրում էին և ասում անճոռնի բադիկ: Նա շատ էր վշտանում: Վազում էր տուն և վիրավորանքից լալիս: Ապագա գրողը երազում էր, որ մեծանալով դառնալու է մի գեղեցիկ իշխանազն՝ գեղեցիկ քթով և ականջներով:

Ահա մեծացավ Անդերսենն ու գրեց զարմանահրաշ իր հեքիաթները: Եվ մարդիկ սկսեցին հիանալ նրանով:

Որպեսզի աշակերտները հետաքրքրություն ցուցաբերեն և անհամբերությամբ սպասեն թեմայում ընդգրկված բնագրերի ուսումնասիրմանը, ուսուցիչը դիմում է երեխաներին.

-Սիրելի՛ երեխաներ, մենք մուտք են գործում մի հրաշալի թեմայի աշխարհ՝ «Լինում է, չի լինում, մի հեքիաթ է լինում»: Մի քանի դաս շարունակ մենք հանդիպելու ենք հետաքրքիր և ուշագրավ հեքիաթների: Մենք նամակներ ենք ստացել այն հերոսներից, ովքեր մեզ են սպասում գրքի հաջորդ էջերում:

Ուսուցիչը բացում է ծրարը և կարդում առաջին նամակը:

Ուսուցիչ - Մեզ գրել է մի պապիկ.

«Բարև՛ ձեզ, երեխանե՛ր: Իմ թոռնիկը ձեր հասակակիցն է: Սիրում է հեքիաթներ կարդալ: Բայց ես հեքիաթ պատմել չգիտեմ: Ամեն ինչ խառնում եմ իրար: Թե ինչ է լինելու հետո, կհանդիպենք, և կիմանաք: Ես սպասում եմ ձեզ»:

Հաջորդ նամակները կարդում են աշակերտները.

«Բարև՛, երեխաներ: Ես աշխատասեր գյուղացի եմ: Եթե ուզում եք իմանալ, թե ինչ է լինում, երբ հանդիպում եմ գողերի, ապա սպասե՛ք ինձ: Շուտով կհանդիպենք»:

«Ողջույն: Ես չարաճճի կապիկն եմ: Ուզու՞մ եք իմանալ, թե ինչպես եմ հիմարեցնում աղվեսին ու գայլին: Երբ հանդիպենք, ամեն ինչ կպատմեմ»:

«Բարև ձեզ: Ես մի խեղճ ծառա եմ: Երբ հանդիպենք, կպատմեմ ձեզ իմ ժլատ և հարուստ տիրոջ մասին»:

«Ողջո՛ւյն, երեխանե՛ր: Ես ձեզ ծանոթ Կացին ախպերն եմ: Ինձ վաղուց եք ճանաչում: Թեմայի վերջում անպայման կհանդիպենք»:

Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է անդրադառնալ գրքի թեմատիկ նկարին: Աշակերտներն ուսումնասիրում են նկարը և ուսուցչի հանձնարարությամբ վերլուծում դրա բովանդակությունը: Ուսուցչի առաջարկությամբ աշակերտները փորձում են կռահել, թե ովքեր էին նամակագիրները:

❖ *Կշռադատում*

Դասարանը վիճակահանությամբ բաժանվում է երեք խմբի: Խմբերից յուրաքանչյուրն իր առաջադրանքն ընտրում է «Հեքիաթ» թեմատիկ պաստառից, որի վրա կա երեք գրպանիկ՝ յուրաքանչյուրում մեկ առաջադրանք:

Առաջին խումբը գրում է անվանակապ ՀԵՔԻԱԹ բառով:

Հերոսներով հարուստ ես,
Երեխաները սիրում են քեզ:
Քնելիս ես հայտնվում,
Իրական ես, իմաստուն:
Ապրում ես մեր մտքերում,
Թևեր տալիս մեր հոգուն:

Երկրորդ խումբը գրում է կենսագրական բանաստեղծություն:

Ես - Հեքիաթ
Բնավորությունս- բարի, աշխատասեր, դյուրազգաց
Ազգականներս- առակ, պատմվածք, բանաստեղծություն
Սիրում եմ – երբ ինձ կարդում են
Զգում եմ - ջերմություն
Կարիք ունեմ – ընթերցասեր երեխաների

Վախենում եմ- չար հերոսներից
Տալիս եմ- գիտելիք
Ուզում եմ- ինձնից սովորեն
Բնակվում եմ -գրքերում
Ազգանունս- Հեքիաթիկյան

Երրորդ խումբը բեմադրում և ներկայացնում է իր նախընտրած հեքիաթը:

Ուսուցիչը հայտարարում է «Ընթերցանության մրցույթ», որի մեկնարկը տրվում է թեմայի մուտքով և կամփոփվի «Լինում է, չի լինում՝ մի հեքիաթ է լինում» թեմայի ամփոփման ժամանակ: Աշակերտները նույն խմբերով օրի ընթացքում պետք է կարդան հեքիաթներ և վերնագրերը գցեն պաստառի համապատասխան գրպանիկներում: Որ խումբն ավելի շատ հեքիաթ կկարդա, նա էլ կհամարվի հաղթող, և խմբի անդամները կստանան «Ամենաընթերցասեր» անվանակարգով պատվոգրեր:

Դասի պլան 2

Մեկ շաբաթ հետո անցկացրի 2-րդ դասաժամը,որը կազմակերպել էի արտասովոր ձևով՝ ոչ ստանդարտ: Դասարան 3-րդ

Թեմա՝ հեքիաթ

Նպատակը՝

1.Կարողանալ նկարագրական և գեղեցիկ խոսք կառուցել,

2.Իմանալ տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ:

Վերջնարդյունքը:Ամբողջությամբ կարողանում էին վերլուծել և հանել գլխավոր միտքը ասել տեսակը և բավականին տեղեկություններ գիտեին հեքիաթագիրների մասին:

Գնահատականը- միավորային գնահատական ստացան բոլորը:

Մեթոդները՝ էմպիրիկ և տեսական մեթոդներ կիրառվեցին:

Ռեսուրսները- հեքիաթի գրքեր,դասասենյակ փոխակերպվախ հեքիաթային աշխարհի,հեքիաթային իրեր,հեքիաթային ռեսուրսներ:

Դաս- հեքիաթն անցկացրել եմ արտասովոր ձևով:Ամբողջ դասասենյակը փոխակերպվել է հեքիաթային աշխարհի,իսկ երեխաները հեքիաթների հերոսների:

Դասը անցկացրել եմ մեկ կամ մի քանի հեքիաթների բովանդակության համադրմամբԸնտրել եմ ժողովրդական կամ հեղինակային հեքիաթներ:Օգտագործել եմ հեքիաթային իրեր,երեխաներին օգնության են հասել հեքիաթային հերոսները,դասի ընթացքում օգտագործեցինք համապատասխան արտահայտություններ ու բառեր:

Դասի ընթացքը՝

Դասը սկսել եմ հեքիաթների գրքերի ցուցահանդեսի կազմակերպումով կամ դիտումով:

Անցկացրել եմ մրցույթ <<Կռահիր հեքիաթը>> անվանումով:Ընթերցեցի հարվածներ հեքիաթներից,իսկ երեխաներն անվանում էին հեքիաթը և ցուցահանդեսում ցույց տալիս այն գիրքը,որտեղ զետեղված է տվյալ հեքիաթը:Կամ յուրաքանչյուր խումբ

դերային խաղով ներկայացնում է ,որևէ հեքիաթ,իսկ մյուս խումբը պետք է կռահի հեքիաթի վերջնագիրը:

Ամբողջ դասարանը բաժանվում է 3 խմբի:Առաջին խումբը ներկայացնում է աշխարհի ժողովուրդների հեքիաթների աղվեսներին:Երկրորդ խումբը ներկայացնում է արջերին,երրորդը նապաստակներին:Յուրաքանչյուր աշակերտ ինքն է որոշում,թե որ խմբի անդամ կցանկանա լինել:Երեխաները նախապատրաստվում են այս դասին:Նրանք ընտրում են հեքիաթը,իրենց հերոսներին,պատրաստում են փոքրիկ դերային խաղեր այդ հեքիաթից:Խմբերն ընտրում են որևէ խորհրդանիշ,համապատասխան անվանում,նշանաբան և այլն:

Տվյալների մշակում և վերլուծություն

Առաջին դասաժամին աշակերտները չգիտեին,թե ինչ թեմայով է մուտքի դասը:Նախապատրաստել էին հարցեր,որոնք բառ պատասպաններ են պարունակում,որից աշակերտները կկռահեին դասի վերնագիրը:Աշակերտները ճիշտ պատասխանեցին հարցերին,գտան վերնագիրը:Մտագրոհի մեթոդով ճիշտ կարողացան թվել այն ամենը,ինչ զգում են հեքիաթ բառն ասելիս:Նրանք կարողանում էին մաս առ մաս կարդալ և վերլուծել հեքիաթը:Աշակերտները ճիշտ կարողանում էին ասել հեքիաթի տեսակը,կարողանում էին համեմատել և համադրել հերոսներին:Գիտեին,որն է կոչվում հեքիաթ,իսկ ժանրային մի քանի լրացումներ ևս կատարեցին:Աշակերտները կարողացան հեքիաթ բառով անվանակապ ստեղծագործել,գիտեին շատ հեքիաթներ,բայց հեքիաթագիրների քիչ տեղեկություններ ունեին,միայն Հ.Թումանյանի մասին լիարժեք տեղեկություն ունեին:Իսկ խոսքի շարադրանքի մեջ որոշ երեխաներ թերանում էին:Այս ցդասի վարման արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում

Ակտիվությունը	Միջին ակտիվություն	Պասիվություն
70%	10%	20%

Երբ մեկ շաբաթ հետո անցկացրի 2-րդ դաս-հեքիաթը, նկատեցի փոփոխություններ զգալի:

Աշակերտները ավելի լավ էին վերլուծում՝ ճիշտ գեղեցիկ նախադասություններով,համեմատում և համադրում ,նրանք նույնիսկ բեմադրեցին մի քանի հեքիաթ:Արդեն գիտեին շատ հեքիաթագիրների մասին:Աշակերտները լավ

մեկնաբանում էին այս ժանրի մասին,նրա առանձանհատկությունների և տեսակների մասին:

Քիչ թերություններով,բայց զգալի արդյունքներով ես հասա իմ հետազոտական աշխատանքի նպատակին:Արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Ակտիվությունը	Միջին ակտիվություն	Պասիվություն
80%	15%	5%

Եզրակացություն

Այսպիսով,հայ ժողովրդական հեքիաթները այժմ էլ չեն կորցրել իրենց գեղարվեստական,պատմաճանաչողական և դաստիրակչական նշանակությունը:Նրանք իրենց հարուստ բովանդակությամբ ուսումնասիրության լայն ասպարեզ են բացում գիտության գրեթեբոլոր բնագավառների մասնագետների համար:Նրանք առատ և անսպառ նյութեր են մատակարարում պատմաբանին և ազգագրագետին,գրականագետին և լեզվաբանին, և ….:

Այն հայ ժողովրդական բանահյուսության ամենահին,ամենատարածված և ամենահարուստ ժանրերից է:Այս հեքիաթների մեծագույն մասը խորապես ազգային ստեղծագործություններն են,որոնք տարբերվում են ուրիշ ժողովուրդների հեքիաթներից իրենց լեզվով կյանքի,կենցաղի,բնության նկարագրով և հերոսների հոգեկան կերտվածքով:

Հեքիաթները իրենց ֆանտաստինկ,ռեալիստական սյուժեներով ու կերպարներով արտացոլում են հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքը՝ սկսած խոր նախնադարից,վերջացրած մեր երկրում:Իբրև բանահյուսության ամենակենսունակ ժանրերից մեկը,հեքիաթները պատմությունն ուղեկցելուց բացի տնտեսական ու սոցիալ- քաղաքական կյանքի պայմաններին զուգընթաց և նրանց հիման վրա արտացոլել են հայ ժողովրդի աշխարհազարգացման ու աշխարհայացքի բովանդակությունն ու բնույթը,աշխարհայացքը,որը գերազանցապես ռեալիստական է և տարերայնորեն մատերալիստական:Հեքիաթը մեծ դեր ունի անձի բազմակողմանի դաստիրակության գործում:Հեքիաթի նոր բնավորության գծերով,նոր հատկանիշներով,նոր որակներով,նոր գիտելիքներով,կարողություններով ու

հմտություններով է զինում անձին:Այն մեծ դեր ունի անձի գեղեցիկ և նկարագրական խոսքի զարգացման կառուցմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զրբաշյան Էդ. <<Գրականության տեսություն>>, Ե., 1980 2.

Գ.Գրիգորյան <<Հայ ժողովրդական բանահյուսություն>>, Ե., 1980:

3. Մ.Խորենացի << Հայոց պատմություն>>, Ե., 1961:
4. Ագաթանգեղոս, <<Հայոց պատմություն>>, Ե., 1983:
5. Փավստոս Բուզանդ<< Հայոց պատմություն>>, Ե., 1987:
6. Լեո, Խոջայական <<Կապիտալ>>, Ե., 1934:
7. Լեո<< Հայ կղերական դիվանագիտությունը>>, Ե., 2002:
8. Ա.Աբրահամյան, «Նախամաշտոցյան հայ գիր եւ գրչություն», Ե., 1982:
9. Դավիթ Անհաղթ, Յոթնագրյանք (պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում):
10. Հ.Աճառյան<< Հայոց գրերը>>, Ե., 1984:
11. Ձ. Ավետիսյան<< Խորենացին մշակույթի գիտակցության մեջ>>, Ե., 2001:
12. Մ.Մկրյան<< Երկեր>>, հ. 1, Ե., 1987:
13. Ա. Սարգսյան, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» եւ Մովսես Խորենացին, Ե., 1991:
14. Վ. Տերյան<< Երկեր>>, <<Հոգեւոր Հայաստան>>, Ե., 1989:
15. Ժ.Քալանթարյան<< Հայ գրականագիտության պատմություն>>, Ե., 1986:
16. Լեո<< Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը>>, հ. Ա, Ե., 1994:
17. Ձ.Միրզաբէգեան<< Ակնարկներ հնդկահայ գրականութեան եւ մշակոյթի պատմութեան. 1770-1850>>, Ե., 2000:
18. Ա.Տեր-Գրիգորյան, «Հեքիաթի ուսուցումը տարրական դասարաններում», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Եր., 1978, N3-4:
19. Ա.Տեր-Գրիգորյան <<Գեղարվեստական ստեղծագործությունների ավանդումը տարրական դասարաններում>>, Եր., 1971:
20. Ա.Տեր-Գրիգորյան<< Ընթերցանության մեթոդիկա>>, Եր., 1978:
21. Գ.Գրիգորյան<< Հայ ժողովրդական բանահյուսություն>>, Եր., 1967:
22. Ձ.Գյուլամիրյան<< Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>, Եր., 2006:
23. Վ.Հարությունյան <<Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում>>, Եր., 1959:
24. **Գ ո ւ ր և ի չ Պ**.<< **Մշ ակ ո ւ թաբ ան ո ւ թյ ո ւ ն** >>, **Ե ր և ան** 2002
25. **Խաչ ատր յ ան Ն .Մ**.<< **Ան տի կ գ ր ակ ան ո ւ թյ ան պատմ ո ւ թյ ո ւ ն** >>, **Ե ր և ան** 2002
26. **Կ ո ն ի Ի .Ս**.<< **Բ ար ո յ ագ ի տակ ան բ առ ար ան** >>, **Ե ր և ան** 1985
27. **Կ ր ավ չ ե ն կ ո** << **Ս ո ց ի ո լ ո գ ի ա**>>, **Ե ր և ան** 2004
28. **Հ այ զ ի ն գ աՅ** .<< **Մշ ակ ո ւ յ թի խաղ այ ի ն տար ր ե ր ի ս ահ մ ան մ ան փո ր ձ** >>, **Ե ր և ան** 1992
29. **Յ ո ւ զ բ աշ յ ան Բ .Տ** .<< **Ար տաց ո լ մ ան տե ս ո ւ թյ ո ւ ն ը և գ ր ակ ան ո ւ թյ ո ւ ն ը** >>, **Ե ր և ան** 1972

30. Ջրբաշյան Է.դ., Մախչանյան Հ. <<Գրականագիտական բառարան>>, Երևան 1980
31. Սարինյան Ս.<<Հայոց գրականության երկուդարը>>, Երևան 2002
38.Մ.Ս.Մելքումյան «Դպրոցականների գեղագիտական զգացմունքների դաստիարակությունը», Երևան, 1967թ.

39..Հովսեփյան Գ.<<Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից>>, Թ., 1892:

40. <<Ընտիր էջեր հայ գրականության>>, Ե., 1946:

41.Մ.Աբեղյան <<Ժողովրդական խաղիկներ>> Երևան 1967
42.Ն.Շնորհալի <<Հանելուկներ>> Երևան ,1984
43.Ս.Հարությունյան <<Հայ ժողովրդական հանելուկներ>>, Երևան ,1960
44.Վարդանյան Ն. <<Հայ իրապատումհեքիաթը>>Երևան, 2009

45.Աելիտա Դոլուխանյան <<Հայ ժողովրդական բանահյուսությունն>> Ե.2008